ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստում քննարկվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը: Նախագծի վերաբերյալ առկա են հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

1. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածում որոշակիացնել «պատմականորեն ձևավորված խումբ» եզրույթը՝ հստակ կարգավորելով, թե որ խմբերն են համարվում պատմականորեն ձևավորված:

2. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածում ազգային փոքրամասնությունների ցանկ նախատեսելուց զատ ամրագրել նաև կարգավորում համապատասխան հիմքերի առկայության դեպքում նշված ցանկի համալրման վերաբերյալ:

3. Առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածում նախատեսել կարգավորում, համաձայն որի՝ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար համագործակցում են Մարդու իրավունքների պաշտպանի և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտական գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ:

4. Առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածում նախատեսել կարգավորում մարդահամարում ազգային փոքրամասնությունների մասին տեղեկատվության ճշգրտությունն ապահովելու համար մարդահամարի կազմակերպման աշխատանքներում ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին ներառելու հնարավորության մասին:

5. Նախագծի՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնության պահպանման իրավունքն ամրագրող 7-րդ հոդվածում նախատեսել դրույթ, համաձայն որի՝ կստեղծվի միջգերատեսչական հանձնաժողով, որն ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների հետ մեկտեղ կմշակի «Ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման և խտրականության արգելքի ազգային ռազմավարություն»:

6. Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթությունը ազգային փոքրամասնությանը պատկանող երեխաների համար *կարող է* կազմակերպվել նրանց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ (...): Հաշվի առնելով իրենց լեզվով կրթությունը երաշխավորելու առնչությամբ պետության կողմից ստանձնած պարտավորությունները՝ անհրաժեշտ է ամրագրել վերջիններիս համապատասխան հստակ կարգավորումներ:

7. Առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ «*սեփական կրոն*» եզրույթը փոխարինել այլ եզրույթով՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը:

8. Նախագծի 12-րդ հոդվածով ամրագրված՝ ազգային փոքրամասնությունների՝ իրենց ազգային և կրոնական տոները նշելու իրավունքի պատշաճ իրացման առնչությամբ առաջարկում ենք օրենսդրությամբ հստակ ամրագրել ազգային փոքրամասնություններին պատկանող տոները՝ հետագա տարընկալումներից խուսափելու նպատակով: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք քննարկել ազգային և կրոնական տոները նշելու նպատակով վճարովի արձակուրդի տրամադրման հնարավորությունը:

9. Առաջարկում ենք նաև կարգավորել ազգային փոքրամասնության համայնքի դրոշի և օրհներգի կիրառման հարաբերակցությունը ՀՀ խորհրդանիշների հետ:

10. Նախագծի 13-րդ հոդվածի առնչությամբ առաջարկում ենք, որ հեռարձակման ծրագրեր մշակելիս և իրականացնելիս հանրային հեռուստատեսությունն ու հանրային ռադիոն համագործակցեն ազգային փոքրամասնությունների համայնքերը ներկայացնող լրատվամիջոցների և կազմակերպությունների հետ՝ ապահովելով նրանց անմիջական և արդյունավետ մասնակցությունը ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներում:

11. Առաջարկում ենք նախագծի 14-րդ հոդվածում ոչ միայն համայնքների, փողոցների, այլև հրապարակների, խճուղիների և այլ օբյեկտների անվանումները նշել նաև ազգային փոքրամասնության լեզվով:

12. Նախագծի այն հոդվածներում, որտեղ նախատեսված է համայնքներում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ բնակչության առնվազն քսան տոկոսը կազմելու վերաբերյալ կարգավորում, քննարկել տոկոսային շեմը նվազեցնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում, համայնքների խոշորացմամբ պայմանավորված, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թիվը քսան տոկոսից քիչ է:

13. Նախագծի 18-րդ հոդվածով ամրագրված կարգավորումների առնչությամբ առաջարկում ենք ազգային փոքրամասնությունների խորհրդի նիստին մասնակցելու հնարավորություն տալ նաև նշված խորհրդի անդամ չհանդիսացող, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

14. Առաջարկում ենք օրենքում ամրագրել կարգավորումներ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների ներգրավման և մասնակցության վերաբերյալ: